ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2025 թվականի N 1052-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի ներքին հարդարման և ինժեներական աշխատանքների գնման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված թիվ ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2024/3 պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված, ինչպես նաև «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի ներքին հարդարման և ինժեներական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «ԱԳԷԱ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի նոյեմբերի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2024/48 պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված պատվիրատուի լիազորությունները վերապահվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին: Ընդ որում, պայմանագրի շրջանա-

կում 2024 թվականին հատկացված կանխավճարի մարմանը վերաբերող փաստաթղթերի՝ գանձապետական համակարգ մուտքագրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ երկամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետի կատարումը՝ կատարելով համապատասխան փոփոխություններ 2024 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2024/3 պայմանագրում:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ մեկամսյա ժամկետում ապահովել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների կատարումը և ամբողջական նախագծանախահաշվային փաստաթղթերի փոխանցումը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

31.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ